ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԵՎ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

04.09.2018 12:17

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
RA MINISTRY OF JUSTICE

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը **13.07.2018թ. գրությամբ** դիմել էր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ բարձրաձայնելով քրեակատարողական հիմնարկներում մաքրության և տեսակցության սենյակներում անհրաժեշտ գույքի բացակայության խնդիրը, ինչպես նաև անդրադարձել էր կալանքի տակ գտնվող պաշտպանյալին արդյունավետ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ համակարգիչների՝ արգելված իրերի և առարկաների ցանկից հանելու վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությանը:

ՀՀ արդարադատության նախարար Արտակ Ջեյնալյանը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ուղղված **03.09.2018թ. գրությամբ** տեղեկացրել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի քննչական գործողություններ կատարելու համար նախատեսված առանձնասենյակները մասամբ համալրվել են անհրաժեշտ գույքով:

Փաստաբանական գործունեության համար անհրաժեշտ համակարգիչների՝ արգելված իրերի և առարկաների ցանկից հանելու հարցի հետ կապված ՀՀ արդարադատության նախարարը տեղեկացրել է, որ ներկայումս մշակվում է քրեակատարողական ոլորտի բարեփոխումներին առնչվող նախագծերի փաթեթ, որի շրջանակներում կդիտարկվի նաև փաստաբանների, պաշտպանների, ինչպես նաև քրեական վարույթ իրականացնող մարմինների ներկայացուցիչների՝ քրեակատարողական հիմնարկ համակարգչով մուտք գործելու հնարավորության հարցը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })